ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՆ Ժ՝ 13.00-ԻՆ, ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՆ Ժ՝ 20.00-ԻՆ, ՀՈՒՆԻՍԻ 24-ԻՆ, ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ, ՀՈՒԼԻՍԻ 08-ԻՆ և ՀՈՒԼԻՍԻ 15-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԻ և ՀՈՒԼԻՍԻ 13-Ի ՀԱՏՈՒԿ ՆԻՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յոթերորդ գումարման Ազգային ժողովի չորրորդ նստաշրջանի ավարտից հետո գումարվել է 6 արտահերթ նստաշրջան՝ 5-ը ԱԺ պատգամավորների նախաձեռնությամբ, 1-ը՝ կառավարության (22.06.20թ. ժ՝ 13.00; 22.06.20թ. ժ՝ 20.00; 24-25.06.20թ.; 30.06.20թ.; 08-09.07.20թ.; 15-16.07.20թ.) և 1 հատուկ նիստ (13.07.20թ.):

Արտահերթ նստաշրջանների ընթացքում Ազգային ժողովն ընդունել է 58 օրենք, որից՝

- 1-ը «մայր» օրենք է: Այն է՝ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքը /Պ-596-30.04.2020,15.06.2020-ԳԿ/:

- 56՝ փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում,

- 1՝ օրենք-համաձայնագիր:

Այդ ժամանակահատվածում ընդունված օրենքներից 12-ի հեղինակը Ազգային ժողովի պատգամավորներն են, 44-ինը՝ Կառավարությունը, իսկ 2-ինը՝ Կառավարությունը և Ազգային ժողովի պատգամավորները («Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» և «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների փաթեթը /Կ-648-12.06.2020-ՊԻ/):

Ազգային ժողովը ընդունել է նաև Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ Սահմանադրության փոփոխությունները /Պ-667-19.06.2020-ՊԻ/:

Ընդունված օրենքներից 5-ինը գլխադասային է համարվել Առողջապահության եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը, 3-ինը՝ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը, 3-ինը՝ Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, 23-ինը՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը, 1-ինը՝ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը, 21-ինը՝ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը, 2-ինը՝ Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը:

Արտահերթ նստաշրջանների ընթացքում Ազգային ժողովը՝

- ընտրել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ և Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի մեկ անդամ,

- լսել և գիտություն է ընդունել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության վերաբերյալ 2018-2019 թվականների հաղորդումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան

հաղորդումը և Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2019 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը:

Յոթերորդ գումարման Ազգային ժողովի հինգերորդ նստաշրջանի օրակարգ կտեղափոխվի 51 հարց, որից 43-ը առաջին ընթերցմամբ ընդունված օրենքների նախագծեր են: Դրանցից 7-ի հեղինակը Կառավարությունն է, 35-ինը՝ ԱԺ պատգամավորներ, իսկ 1-ինը՝ «Լուսավոր Հայաստան» խմբակցությունը:

Շրջանառության մեջ է նստաշրջանի օրակարգում դեռևս չընդգրկված 131 հարց, որից 70-ի հեղինակը պատգամավորներն են, 7-ինը՝ խմբակցությունները, իսկ 54-ինը՝ Կառավարությունը:

30.07.20թ.